



## Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը (**այսուհետ նաև Կարգ**) սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) 2019 թվականի հոկտեմբերի 19-ի ընդհանուր ժողովի (**այսուհետ՝ Ընդհանուր ժողով**) կազմակերպման և անցկացման գործընթացում Պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը:

1.2. Կարգի կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Պալատի ֆինանսական տնօրենը (**այսուհետ՝ Պատասխանատու**):

#### 2. ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔԷՋԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Ընդհանուր ժողովի (այդ թվում՝ օրակարգի հարցերի) վերաբերյալ բոլոր տեղեկությունները (հայտարարություններ, լուրեր, որոշումներ, արձանագրություններ, պարզաբանումներ և այլ նյութեր) հրապարակվում են Պալատի կայքէջում առկա համապատասխան բաժիններում:

2.2. Օրակարգի հարցերի վերաբերյալ այլ դիրքորոշում ունեցող փաստաբանները կարող են իրենց փաստարկները ներկայացնել Պալատի աշխատակազմին՝ կայքի համապատասխան բաժնում տեղադրելու համար: Պալատի աշխատակազմը էլեկտրոնային փոստի, առձեռն կամ փոստի միջոցով ստանալով փաստաբանի փաստարկները, մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն տեղադրում է կայքում, բացառությամբ, երբ գրավոր տեքստը պարունակի վիրավորական կամ զրպարտչական բնույթի տեղեկություններ:

#### 3. ՊԱԼԱՏԻ ԴԱՎՏԻՃԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Պալատը հնարավորություն է ստեղծում օրակարգի հարցերի վերաբերյալ այլ դիրքորոշում ներկայացնող փաստաբաններին առնվազն 1 (մեկ)

ժամով անվճար օգտվել Պալատի՝ ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեի 4-րդ հարկում գտնվող դահլիճից՝ հետևյալ կարգով.

- մինչև 2019թ. հոկտեմբերի 15-ը, ժամը 18.00-ն, առնվազն 20 (քսան) փաստաբանից կազմված խումբը պետք է գրավոր ներկայացնի հայտ՝ նշելով իր նախընտրած օրը և ժամը, ինչպես նաև հանդիպման ակնկալվող ողջամիտ տևողությունը, որը չի կարող գերազանցել 3 (երեք) ժամը.
- Պատասխանատուն ստացված հայտերի հիման վրա նույն աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է դահլիճի զբաղվածության գրաֆիկը և հրապարակում է այն Պալատի կայքէջում:

3.2. Այն դեպքում, երբ տարբեր խմբերի՝ դահլիճից օգտվելու հայտերում նշված օրերը և ժամերը մասամբ կամ ամբողջությամբ համընկնում են, ապա Պատասխանատուն՝ հաշվի առնելով արդարության ընդհանուր սկզբունքը ինքնուրույն է որոշում խմբերի կողմից դահլիճից օգտվելու ժամանակացույցը:

3.3. Պալատի կողմից տրամադրած դահլիճում անցկացվող քննարկումներին իրավունք ունի ներկա գտնվել յուրաքանչյուր փաստաբան:

#### 4. ՄԱՐԶԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Մարզերի փաստաբանների՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքն իրացնելու համար, Պալատը կապահովի Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից Երևան քաղաք (քվեարկության անցկացման վայր) տեղափոխումը և հետադարձը դեպի մեկնման վայր՝ հետևյալ կարգով և պայմաններով՝

- Տրանսպորտային միջոցը կամ միջոցներն (**այսուհետ՝ Տրանսպորտային միջոց**) ապահովում է Պատասխանատուն՝ հաշվի առնելով նաև տվյալ մարզի մարզային համակարգողի առաջարկը՝ փաստաբանների քանակի, երթուղու և մեկնման ժամի վերաբերյալ.
- Տրանսպորտային միջոցը պետք է երթուղին սկսի նախապես հայտարարված ժամին և վայրից.
- Տրանսպորտային միջոցից կարող են օգտվել տվյալ մարզում գտնվող բոլոր փաստաբանները.
- Ըստ մարզերի՝ Տրանսպորտային միջոցների երթուղիների, մեկնման ժամի և վայրի մասին տեղեկությունները մինչև 2019 թվականի հոկտեմբերի 17-ը պետք է հրապարակվեն Պալատի կայքէջում:

#### 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 11-ից և գործում է մինչև 2019 թվականի հոկտեմբերի 20-ը:

5.2. Հաշվիչ հանձնաժողովի պահանջով Կարգն ենթակա է փոփոխման: